

Քեմալական իշխանութեան ձեռնարկած քարենորոգումները, տնտեսական, ճարտարարուեստական, շինարարական եւ զարգացողական շարժումները անուղղակի տուեալներ են՝ թէ թուրքերը ինչքա՛ն կը գուրգուրան իրենց սպառաշին վրայ: Ազգի մը սպազան աւազներու վրայ չի կառուցուիր: Թուրքերը աւաւելապէս խելացի եւ քաղաքագէտ են, դիւնալու համար ի՞նչ է իրենց կառուցածը: Եւ կը կառուցանեն իրենց անմիջական ձեռքերով: Մասնազէտներու եւ արճեստաւորներու, այն տոկոսը կը հրաւիրեն դուրսէն՝ որուն պէտքը անհրաժեշտ է հետապնդուած դործին համար: Հայուն ու յոյնին մատակարարել վարժուած արհեստներն ու մասնագիտութիւնները թուրքերը իրենք լրացնել կը փորձեն: Կը բաւականանան քիչով, բայց իրենք կը հայթայթեն ալ չէ թուրքերը: Ժուժկալութեան եւ ինքնահաճութեան այս չափին մէջ հայրենիքի դաղափարն է որ կը խօսի:

Ո՛ր կողմն ալ դառնանք, չենք կրնար խուսափիլ փաստերէն ու իրողութիւններէն:

Թուրքը երէկ քանդող ու աւրող էր: Ոչ կամուրջ կը շինէր եւ ոչ ալ ջրուղի, ոչ հանքեր կը պեղէր եւ ոչ դաշտեր, ոչ ճարտարապետութիւն ունէր եւ ոչ կոթողներ, բայց այսօր սթափած ու ցնցուած է: Մուսթաֆա Քեմալը այս ցնցումին տիրապէս ստարեց, որովհետեւ ոչ թէ ցանկութիւններու սերմնացանը եղաւ անիկա, այլ մտայնութեան եւ հակումներու դարբինը: Քեմալական յեղափոխութիւնը դուշակող մը կրնար յիմարի տեղ դրուիլ, բայց ալ չէ յեղափոխութիւնը եկաւ զարմացնելու եւ սարսելու ամենէն խելացիներն անդամ:

Մենք, որ թուրքերը շատ մօտէն կը ճանչնանք եւ էապէս ծանօթ ենք այս ժողովուրդի յայտնի եւ թաքուն ճիրքերուն եւ կարելիութիւններուն, անկեղծօրէն կը հաւատանք, թէ ոչ մէկ պատճառ կայ կասկածով նայելու քեմալականներու բռնած ընթացքի յաջողութեան վրայ: Թէ թուրքիւն իր այժմու ոգիով ու ճիգերով դէպի բարգաւաճում ու արդիացում կ'երթայ, բացայայտօրէն կ'երեւայ անաչառ խուզարկուին:

Ազգային կամքը եւ յառաջդիմութեան ու աշխատանքի ոգին՝ յաւելեալ խթաններ են

հայրենիքի դաղափարի խորացման ու ամրապնդման համար:

Եւ մենք բացատրեցինք արդէն՝ թէ ազգային այն հարուստ գիտակցութիւնն ու բընագոյր որ քրքուքեան նոր սերունդներուն յատկանիշն ու հոգեկան սնունդն են, քեմալական Թուրքիոյն բարձրացուցած են հայրենիքի գաղափարի բուն եւ արդար պատուանդանին վրայ, որմէ դայն վար գլտորելու համար ոչ անհիմն խճրճանքները կը գորեն եւ ոչ ալ հայ ժողովուրդի զանգուածներուն զեկալար շըրջանակներուն հիշէն ի վեր ընսանի մեղկութեան եւ թուլամորթութեան աւետարանը:

Թուրքին ճամբան ընդարձակ է ու լայնչի: Մուսթաֆա Քեմալը անով կ'առաջնորդէ ամբողջական ազգ մը դէպի նոր հեռանկարներ եւ հորիզոններ: Հարցը այն պէտք չէ ըլլայ՝ թէ քուրքերը ո՞ր եւ ինչպէ՞ս կը վազեն, այլ ա՛յն՝ թէ ի՞նչ կերպ ու հնարք կայ պատուար քաշելու Քեմալներու սրաքոնիչ երկիւրիւն առջեւ:

Հայ քաղաքական միտքը այս խորքով է որ պիտի բանի եւ գրիչները այս ուղղութեամբ պիտի շարժին, որովհետեւ, մեր ժողովուրդը եթէ կ'ուզէ ապրիլ ու հայրենիք ունենալ՝ թուրքին վազքն ու վերելքը արհամարհելով ու ուրանալով չէ՛ որ պիտի յաջողի:

Այսքանը պատուելիական քարոզ չէ եւ ոչ ալ կրկնութեան բաղձանքը, այլ թրքական գործերը ըստ կամս եւ ըստ քմահաճոյքի պղղատիկցնելու, անխայնելու ու յօդս ցնդեցնելու այն սպարդիւն ճիգերուն հակադրեցութիւնը, որոնցմով ընկ. Թուրքն քեմալական Թուրքիան կամ համաթուրանական հայրենիքի դաղափարը հասցուց «անբովանդակ արկղ»ի մը վիճակին, «որ հաւանաբար պիտի ծառայէ իրր դաղաղ թէ՛ քեմալականութեան եւ թէ՛ թուրանականութեան»:

Եւ հոս կը սկսի մեր յարգելի ընկերոջ սխալմանքին ու մոլորանքին մէկ անհանդուրժելի սահմանը, որուն վրայ անկարելի է կանգ չառնել մատնաւոր ուշադրութեամբ:

* * *

Ինչպի՞սի «արկղ» է՝ քեմալական Թուրքիան, որ 14 միլիոննոց կենսունակ ժողովուրդի մը ապրելու եւ տեւելու կամքին ու վճիռին